ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իրաւաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ . . . . . 5 կր.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ . . . ½ „

Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը:

Ժողովուրդ, մի՛ աղերսիր, այլ պահանջիր եւ ձեռք բեր

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ — ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 2-3. ՅՈՒՆԻՍ--ՅՈՒԼԻՍ. Nr 2-3. | 1897 | ՄԻԱՄՍԵԱՅ

ԱՄՕԹ

Մեծ սուլթանը, Ալլահի որդին և Մարգարէի յաջորդն իրաւունք ունէր ծիծաղելու, երբ երկաթեայ պատեանում պահուած իր կարտօնէ թուրը հանելով՝ խփեց եւրօպական դիւանագիտութեան պղնձէ սաղաւարտի վրայ, որն աղմուկով գլորուեցաւ գետին: Եւրօպական խելօք դիւանագէտների ճաղատ գլուխները մի գարմանալի փայլով փայլեցան այդ ժամանակ, որ տեսնելով թէ ինչպէս իրանք թողին հարիւր հազար հայ կոտորել ու Յունաստանին ջարդել, այսօր ստիպւած են սուլթանի դիմաց իրանց սաղաւարտն էլ գետնից հաւաքել:

Մե՞նք և մեր սաղաւարտը: Մե՞նք և մեր դիւանագիտութեան յաղթանակը: Այդպէս են նրանք պօռում այսօր, ճգնելով հաւատացնել աշխարհին, թէ աջողապէս կատարեցին խաղաղութեան բանակցութիւնները, որի արդիւնքը եղաւ պատուաւոր... Յունաստանի համար: Այո, Յունաստանի նիւթական քայքայման և բարոյական խիստ հարւած ստանալու պայմանով: Բայց այդ ակամայ լաւատեսները դիւրութեամբ են ուզում մոռանալ այն, որ սուլթանն ամբողջ ամիսներ, բանակցութիւնների ընթացքում, շղթայակապ շներ էր յարձակեցնում, մեծ եպարգոսների ու թէվֆիկների կերպարանքով, նրանց՝ դիւանագէտների դէմ: Եւ սրանց քաջութիւնն այնքան էր, որ շների ամեն-մի հաջոցի ժամանակ լռում էին ու կծկւում մէկ անկիւնում, „ամա՜ն, պատերազմ չենք ուզում“ պօռալով:

Այդ ամենը, վերջ ի վերջոյ, կարող է աւարտ ստանալ մի զարձալի ֆարսով, Ia Belle Héllène-ից քաղւած մի թեթեւսոլիկ խմբերգով: Բայց բանն էլ հէնց նրանումն է, որ մեր, փոքրիկ ազգերիս, այդ ինքնակոչ խնամակալները, որոնք խորթ մայրերից էլ վատ են, իրանք հիւանդանում են դիւանագիտաբար և ցանկանում են, որ մենք նրանց հիւանդապահները լինենք և կամ, աւելի ճշմարիտն ասելով, որ մեզնից արիւն առնեն Մարգարէի արիւնռուշտ վերաբոյժները: Այդ գործողութիւնը երեւի թեթեւացնում է հիւանդի վիճակը և հովացնում վերաբոյժների սիրտը: Բայց դոնէ յիրաւի մենք կորցնելով այնքան արիւն՝ վաստակողը լինէր այդ հիւանդը, կարելի էր այդ զոհողութիւնից քիչ մխիթարանք ունենալ: Սակայն հիւանդը վաստակում է այնքան քիչ և վերաբոյժերն այնքան շատ, որ ի վերջոյ անդառնալի կորուստը մենք ենք կրում, վերջնական զոհն էլ մենք էլ լինում յօգուտ Ալլահի որդու և Մարգարէի յաջորդ Համիտի:

Հետևա՞նք այդ ամենի:

Այսօր ամբողջ Իսլամականութիւնը միակ մարդկութեան տեղ իրան է ընդունել, և մեզ, փոքրիկ ազգերիս, համարում է անհրաժեշտ զոհն իր նպատակի, Եւրօպային՝ իր ծառան և սուլթանին՝ իր փրկիչ:

Ընցեալ օրը սուլթանն իբր թէ խօսակցութիւն է ունեցել իր մեծ եպարգոսի հետ և սրան ասել է, թէ „կռիւը մահիկի և խաչի մէջ է“: Դեթէ սուլթանն այն իդիօտն է, որ այդ խօսքն ասելու խելքը չունի բնաւ, ամենևին իդիօտ չեն այն խելօքները, սկսած երկչոտ Սօլըզբերիից, ոչխար Հանֆօտիից, աղուէս Գօլուխովսկիից, թրմբկահար Վ. Ելիսէվից մինչև ինքը սպիտակ Ընջը, որ այդ խօսքը հնարել և դրել են սուլթանի բերանը: Այդ խօսքն ամենաճշգրիտ թարգմանն է ներկայ քաղաքական դրութեան: Սակայն կասկած չը կայ, որ, ինչպէս մինչև հիմա, այսուհետև էլ մահիկն է, որ կը յաղթէ խաչին, և սուլթանն աւելի համարձակօրէն կարող կը լինի շոյել իր տխմար զառանցանքը, թէ հնչել է այն ժամը, երբ Իսլամականութիւնը պէտք է տիրէ աշխարհին:

Բայց խնդիրն այդ զառանցանքում չէ, այլ նրանում, որ սուլթանն այսօր յաղթութեան արհամարհանքի քմծիծաղով է նայում եւրօպական ինքնագով դիպլօմատիայի վրայ, որի գրեթէ յօժարակամ պարտութիւնը պայմանն է սուլթանի ձեռքով ապագայում գործելիք նորանոր սարսափների:

Եւ ասել թէ Եւրօպայի վրայ տարած այդ սուլթանական յաղթութիւնը ոչնչացնելը դարձեալ ու դարձեալ մեր, փոքրիկ ազգերիս, ձեռքումն է... Թո՛ւ, ե՞նչ ամօթ Եւրօպային, շահամոլ, ինքնասէր, ինտրիգան, մարդասպան Եւրօպային...

ԱԻԱՐԸ.

Ձին թռչում է, ձին փրփրում է,
Աչքը՝ կրակ, ծուխ՝ քրթից,
Բաշն ալիքով լայն ֆռֆռում է,
Կայծեր ցայտում են պայտից:
Ծաղկահասակ քիւրդ քաջարին
Գանձ է տանում թանկագին.
Հայ աղջկան, նաև չինարին,
Նա սեղմում է իր գրկին:

Ուշ գիշերւայ մութն է կոխած,
Խաւարն է լի քաջքերով.
Երկրին հայեացքն է իր՝ մեխած
Երկինքն հազար աչքերով:
Գորտ — թռչունի ճախարակը
Ան ու զոյժ է գլորում,
Անտառն հողմի ողբի տակը
Մեռելներին օրօրում:

Նագիկ կարապ, աստղ մարած,
Աշնան օրւայ պէս դժգոյն,
Քաղւած կոկոն — կոյսը սառած
Անգիտակ է, որպէս քուն:
Եւ հեծեալը Նրա տրկար
Թեւերն գրցած իր վզով,
Սրտաբաքախ ու սիրահար՝
Քրշում է ձին վրռազով:

Ձին թռչում է՝ արիւն — քրտինք,
Մերթ վախեցած յետ հրւում,
Մերթ զարկում է հողն ու գետինք,
Պատռում խաւարն ու կուում:
Մինչ նրանց ետից քրքիջներ են
Մէկից պայթում խորերից,
Աղմուկ, ծիծաղ, տրտունջներ են
Նրանց հետեւում անտառից:

Ցանկարծ զոհը դողաց — մընաց...
Խրփեց ձիուն հեծեալը...
Ոչինչ չընկաւ. կոյսն է քընած,
Քընած, ինչպէս անցեալը...
Մինչ լրսելի եղաւ մի ծայն,
Ջրէժի խիստ շառաչը,
Քարերի ծափ հարիւրածայն...
Ան՛ եւ շան խուլ հաչը...

Գուշակելով մօտ վրրանը,
Կրակի պէս է ձին թռչում,
Փրփրած լանջքն ու բերանը՝
Հեռւի խորն է նա կորչում:
Սրտի զարկը պայթեցնում է
Քաջի կուրծքը յաղթական...
Հասաւ... Զոհին իջեցնում է
Նա խընամքով սիրական...

„Հա՛յր, տես աւարն իմ այսօրւան.
„Այսպէս զանձ ո՞վ, ե՞րբ գրաւեց...“
Ասաց, դրրաւ քարձի վրրան,
Նայեց — ճրչաց, գլորւեց...
Մի նուրբ դիակ էր նրա առաջ,
Դէմքին՝ ցաւերն մաքառման,
Շրթին՝ մարած վերջին հառաչ
Եւ սառ համբոյրը մահւան:

ԽԵՆԹԸ.

ԴԷՈ ՈՒ ԴԷՆ

Եւ ասում են, թէ Jeune Թիւրքերը հայրենասէրներ չեն: Ես պնդում եմ և միշտ պընդել եմ դրա հակառակը: Շատ գոհ եմ, որ նրանց Mecheveret թերթը տալիս է դրա մի նոր փայլուն ապացոյցը: Ահա խնդիրը: Այդ թերթում յայտարարւում է, որ Jeune Turquie „կոմիտէներն“ ուզում են եղել „ընդհանուր ժողով“ գումարել... Բայց ժողովի հէնց

կայանալիք օրերը նրանց պարագլուխներն ըստանում են իրանց սուլթանից մի „Ծրար„, որի մէջ սա նրանց „հրաւիրում“ է ժողով չանել, նախատեսելով, որ Թիւրքիան, իրանց հայրենիքը, գտնւում է վտանգի մէջ և մահմեդականն այդպիսի մի ծանր ժամին չը պիտի վատ գտնէ դէպի իր հայրենիքը։ Jeune Turquie-ի պարագլուխներն այնքան տրամաբանական ու հայրենասիրական են գտնում իրանց տէր սուլթանի այդ կոչն ու յանդիմանութիւնը, որ անմիջապէս որոշում են... ժողովն այլ ևս չը գումարել։... Խօսք չը կայ, որ սուլթանն ամենազօր է այսօր, և եթէ այդպէս գնայ, շատ բան խոստացող է, ինչպէս և Jeune Turquie-ի պարագլուխներն էլ խոստանում են այդ ուղիով շատ հեռու ու բարձր գնալ... մինչև սուլթանի գոգը... եթէ արդէն չեն հասել...

* * *

Անցեաց օրն իմ բարեկամներից մէկը հանդիպելով Մինաս Չերազին, ասում է. —

— Ինչպէս կերևայ ձեր թերթին գրողն այնքան ալ հնարագէտ չէ. ամեն թերթի մէջ մի և նոյն բանը տպագրել կուտաք Նազարբէկին դէմ...

— Հասարակական շահն այդպէս կը պահանջէ, ասում է Չերազը խորագէտ դիւանագէտի շեշտով։

— ?!

— Ինչո՞ւ կը զարմանաք. չէ՞ մի թերթս հասարակութեան համար է... այնպէս չէ՞... Է՛հ, շատ այն օրէն ի վեր, ինչ կը գրեմ Նազարբէկին դէմ, տխմար վաճառականներ կան, որոնք թէև չեն հաւատար ըսածներուս, բայց կը հաւնին, որ ամենուն սարսափը եղած և սարսափ պատճառած Յեղափոխականի դէմ ատանկ յարձակումներ կընեմ և... թերթիս թիւերէն շատ կառնեն, փարա կուտան ու կը ցրուեն...

* * *

Սուլթանն ամենաժրաջան կերպով շարունակում է բարենորոգումներ անել Հայաստանում ... Թիւրք պաշտօնական թերթերի ծանուցումով այժմ մեր հայրենիքում բազմաթիւ ոստիկաններ նշանակուած են հայերից, որոնց մեծ մասն առաջ... լրտեսի պաշտօններ ունէին։

* * *

Մեծ տէրութիւնների ներկայացուցիչներն իրանց դեսպանաժողովում խօսում են Թիւրքական զօրքերի թէսալիայից դուրս գալու խնդրի մասին։

Մի դեսպան. — Անհրաժեշտ է ամենախիստ միջոցներ ձեռք առնել Թիւրքական զօրքերը հանել տալու համար։

Երկրորդ դեսպան. — Հանգիստ եղէք, այդպիսի միջոցների կարիք չը կայ· վաղ թէ ուշ զօրքերն այնտեղից դուրս հանել կը տայ սուլթանը։

Երրորդ դեսպան. — Իսկ եթէ բոլորովին դուրս էլ չը գան՝ ի՞նչ կը լինի։

Չորրորդ դեսպան. — Թէսալիան արդէն առաջ Թիւրքիային էր պատկանում։

Միւս երկու դեսպանները յայտնում են, որ չորս դեսպանների ասածներն իրաւացի են։

Եւ եւրոպական թերթերում շարունակ կարդում ենք, թէ դեսպաններն ամենասրտաշարժ „համաձայնութեան“ մէջ են միշտ... Եզրակացութիւնն այն է, որ սուլթանն ինքն իրան հետ շատ համաձայն է այն բանում, թէ ինքը պէտք է շարունակաբար օգուտ դեսպանների այդօրինակ համաձայնութիւնից։

Հօջա Նասրադինի կաղ էշն աւելի շուտ-շուտ էր առաջ գնում հին դարերում, այն էլ առանց պզպեղի գործածութեան, քան 19-րդ դարու եւրոպական դիւանագիտութիւնը։

Բայց ի՞նչ զարմանք. այդ դիւանագիտութիւնը վճռել է փրկել սուլթանին ու օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը պահպանել· այդ պատճառով արագ առաջ գնալ չէ կարելի. Թիւրքիան կը փլչի։

* * *

Բարոյական տրամաբանութիւն. — Երբ աջողութիւն ունես՝ խնդակից եմ, իսկ եթէ՝ ոչ — ցաւակից եմ։

Անբարոյական տրամաբանութիւն. — Երբ աջողութիւն ունես՝ առջևդ քծնող եմ, իսկ երբ՝ ոչ — թշնամի եմ։

Հայ հասարակութիւնն և իր „գործիչներն“ այս վերջին տրամաբանութեան հետևող են։ Ճիշդ ինչպէս Աֆրիկայի ամենավայրենի նիամ-նիամները։

* * *

Հասկացողին մի խօսք ասա, տխմարին՝ հազար — հին ասացուած է, բայց նորը՝ ահա — հասկանալ ուզողին բնաւ խօսք մի ասիր, նա ինքը կը հասկանայ, իսկ հասկանալ չուզողին հազարն էլ ասես՝ նա ծուռ կը հասկանայ։

Ծուռն ուղղել աւելի դժուար է, քան ուղիղը ծռել — հին խօսք, բայց նորը՝ ահա — ծուռը ծուռ է, ուղիղն՝ ուղիղ, մի ճշմարտութիւն, որ շատ քիչերն են հասկանում և որ շատ շատերը չեն ուզում հասկանալ։

* * *

Երբ աքաղաղն աւետում է լոյսը, խաւարի թռչունները սկսում են դողդողալ։

ՄԱԽԱՍ.

ՍՈՒՏ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ — ԿԵՂԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒ Ի ԷՒՉ

Յայտնի ազգասէր, հռչակաւոր փրօֆէսէօր Մինաս Չերազը լսում ենք, որ իբր ընդհանուր հայ ազգի կողմից Անգլիոյ Թագուհու, վաթսունամեայ թագաւորութեան յօբելեանի առիթով, իր յատուկ շողոքորթական ոճով շնորհաւորական մի ուղերձ է մատուցել։ Դուք գուցէ չը հաւատաք ասածիս, բայց անհաւատալի չէ, որ այդպիսի բան արած լինի մեր տիտղոսամոլ սուտ պատգամաւոր Չերազը։

Ապացոյց — ահա։

Այդ սուտ պատգամաւորն էր, որ սրանից դեռ երկու տարի առաջ ազգային ներկայացուցչի դիմակ հագած, Տէքի դուքսին դիմեց „Հայ կոմիտէների„ կողմից և խնդրեց որ դուքսը հաճէ հաւանութիւն տալ Հայոց... իշխան ն լինելու... Ներեցէք յաւիտենական կեղծ պատգամաւորի այդ դոնքիշոտական աճապարանքը, բայց նա այնքան յոյս ունէր ծառայ գրուելու այդ դուքսի մօտ... երբ սա դառնար իշխան։

Դուքսը մեր Միւսիւին ոտքից ց'գլուխ մէկ արհամարհական և ծաղրական ակնարկ ձգելուց յետոյ՝ շուռ տուեց իր երեսը, չը կարողանալով այլ ևս զսպել իր ծիծաղը...

Դարձեալ ապացոյց... երևի Թովմաեան էֆ. կուզենաք անպատճառ մատերնիդ կողը կոխել, որ համոզուէք. բայց խիղճ ունեցէք, գոնէ յիշեցէք, որ սուտ պատգամաւորն նոյնպէս մեծ նախաձեռնող է այն մեծ, ամենաընտիր ոսկեզօծ թղթի վրայ գրուած շնորհակալութեան մի ուղերձի պարսից Նախորդ Շահ Նասրէդդինի մատուցանելու համար... ումից... ի հարկէ ամբողջ հայ ազգի կողմից. ազգային կեղծ պատգամաւորը պստիկ բան իսկի կանի՞... Բայց, ափսոս, Շահը նոյն ժամանակները սպանուեց և չը գիտեմ, թէ յետոյ Միւսիւ Չերազ և Co այդ թուղթը որ ծակը խոթեցին...

Այդ զաւեշտական ու մասխարայ ցուցամոլութեան ու օյինբազութիւնների հանելուկը կուզէք։ Ահա։ Միւսիւ Չերազը միշտ ուզում է իր պզտիկ տեղովը մեծ երևալ, այդ պատճառով միշտ պինդ բռնում է ամեն մեծ մարդու... փէշքերից, թէկուզ հէնց այն պայմանով որ մեծ մարդիկը նրա վրայ ծիծաղեն կամ նրան մարդու տեղ չը դնեն... և որքան երջանիկ կը լինի եթէ նրան ծառայի տեղ վերցնեն... Ի՞նչ ծիծաղելի բաներ կան աշխարհում... Միւսիւ Չերազին դեռ չը ճանաչած՝ այդ բանը չը գիտէի. հիմա գիտեմ։ Իսկ ով այդ չը գիտէ, որքան խղճալի է... Ծիծաղ բան, վերջապէս։

ԾԻԾԱՂ.

ԱՌԱԿ

Մէջքը շալկած լի ցորենի ծանրը բեռ,
Իր քրտինքի, աշխատանաց վաստակը,
Խեղճ մշակը յոգնած կերթար դէպի վէր,
Կերթար դէպի տընակը։
Ցանկարծ ինչ որ մութ տեղէն
Մարդու մէկը շունն անոր վրայ հաջեցուց։
Շունը հասաւ, կատղած թոյնոտ մը դեղէն,
Խածաւ ոտքը, մշակի հոգին մաշեցուց։
Շան հաջոցէն ամեն ծակ ու ծուկերէն,
Ինչպէս եղաւ, դուրս ցատկեցան շունիկներ,
Որ կը վախնան մուկերէն.
Բորոտ, քոսոտ, միշտ կըշկրոտած պոչիկներ,
Այդտեղ առիւծ, քաջ կըտրեցան
Մըշակի վրայ յարձակեցան,
Փրթաւ հաջոց,
Աղմուկ, գոռոց...
Պատառեցին լի ցորենի մեծ պարկը —
Շունն ի՞նչ գիտէ աշխատանքի մեծ յարգը,
Եւ մըշակի վաստակը,
Թափեց գետնի յատակը։
Այն ժամանակ մըշակը
Դարձաւ բորոտ շուներուն
Ու խօսեցաւ. „Այս մեծ շունն է թշնամուն
„Որ ղրկուեց զիս խածնելու
„Դուք, որ միայն անոր առջև քծնելու
„Ընդունակ էք, ձեզ ի՞նչ եղաւ, ո՜ շուներ,
„Որ վաստակիս ցիր-ցուր արիք, գաճաճներ“։
Անցորդ մը այդ խօսքերը
Լսեց, ասաց մըշակին.
— Մըշակ, շանը խածած քո խոր վէրքերը
Շուտով փսթթէ։ Թող տուր հաջեն. փէշակին
Շունիկներու անծանօթ ես միթէ. անոնք կը հաջեն,
Որ մարդ կարծէ՝ թէ քաջ են։

Ա.

ՀԱՆԳԱԿՆԵՐ

Ի՞նչ է պատճառը, որ „Հնչակի“ ներքին թշնամիները, որպէս և զանազան դաւաճանները յեղափոխական տասնամեայ գործունէութեան պատասխանատուութիւնը „Հնչակի“ վրայ կը բարդեն, մինչդեռ նոյն այդ գործունէութեան հերոսներ միայն իրենց կը ներկայացնեն և ձեռնարկներն ալ միայն իրենց „նախաձեռնող հանճարին“ կը վերագրեն։

— 0 —

Լեզուական տարօրինակութիւններ։

„Հայքի“ տիեզերական թերթին մէջ կը կարդանք հետևեալ ոգևորուած կոչը, Գաբրիէլեան հայերէնի ոճով. —

„Հայք, կայ փառքի ճամբաս։ Հայ, կախել գիտնանք։ Սնանք հայ կաթէն։ Մեր մէջ է այդ և ոտաց մեր տակն առնենք ինչք և տիեզերք“։

Այդ մարգարէական հրաւէրը թարգմանելով պարզ հայերէնի, կըլլայ այսպէս (իրար ետևէ նախ կը դնենք „Հայքի“ տողը և յետոյ թարգմանութիւնը, յաջորդաբար). —

„Հայք, կայ փառքի ճանբաս։
— „Հայքը“ բարքի ճանբազ։
„Հայ, կախել գիտնանք։
— „Հայքը“ խելքի տնանկ։
„Սնանք հայ կաթէն։
— Սնանկ գագաթէն։
„Մեր մէջ է,
— Մեր մէջք չէ,
„Այդ և ոտաց մեր տակն
— Ա՜յ, դևոտած մեր Ակն։
„Առնենք ինչք և տիեզերք“։
— Ա՛ռ, նենգ, մինչև դիեզ երգ։

Ամբողջական թարգմանութիւն. —

„Հայքը“ բարքի ճանբազ։ Հայքը խելքի տնանկ։ Սնանկ գագաթէն։ Մեր մեղք չէ, այ դևոտած մեր Ակն։ Առ, նենգ, մինչև դիեզ երգ։

— 0 —

— Ինչո՞ւ համար հոգով ու խելքով պզտիկ մարդիկը մեծ մարդկանց իրենցմէ պզտիկ կը համարեն։

— Որովհետև մեծերն իրենց պէս պզտիկ կերևան իրենց աչքին։

ՅԱՅԳԵՐԳ

Եղանակը — „La Belle Hélène"-ից։

Եւրոպական համաձայնութիւնը երգում է. —

Ցանուն մահիկի եւ Մարգարէի՝
Ա՜հ, քո ճոխ կուրծքը ես զարդարէի
Արծւի ու խաչի իմ դրօշակներով,
Եւ դիւանագէտ իմ փէշակներով

Կուզէի դարձնել սրտիս թագուհի.
Միայն խնդրում եմ, ո՞վ մեծ տիրուհի,
Այս Եւրոպական համաձայնութեան
Յայգերգը լսեիր եւ խաղաղութեան
Աղերսը սիրուն ձեռքով ստորագրիր,
Սիրոյդ գերի՞ եմ ու խեղճ տարագիր։

Թրքուհին երգում է. —

Հաւատարիմ չե՛ս, ասպետ անժըպիտ,
Ես չեմ վատահ ջերմ զգացմանը սրտիդ։
Դու Գեղեցկուհի Հէլէնէի հետ
Սիրոյ տարփանքը գըտար շահաւէտ։
Թիստ նախանձիս մէջ ես իմ մրցակցիս

Մազերն փետտեցի, հովացաւ հոգիս։
Եթէ բարձրանաս մինչ իմ աշտարակ,
Ոտքդս համբուրես, լոկ այն ժամանակ
Քո աղերսանրիդ ականջ կը դնեմ՝
Եւ քեզ Իսլամի դրախտը կը տանեմ։

— 0 —

Եթէ միութեան դաշինք կապեն ու մէկ ընկերութիւն հիմնեն հետևեալ նշանաւոր կենդանիները՝ տակէն ինչ կելնէ. —

Մի քաջ նապաստակ, մի գիրեզմանապահպան բորեան, մի ուղղամիտ աղուէս, մի բարի գայլ, ագին միշտ ցած պահող մի այծ, մի չը հաջող շուն, մի խելօք ոչխար, մի գըլուխը միշտ բարձր պահող համարձակ մուկ, մի մսապահ պան կատու, մի մէջքը շիտակ ուղտ, մի... սուտ բայց նշանաւոր պատգամաւոր, հայ ազգի մի կեղծ բայց յայտնի ներկայացուցիչ, մի անխարդախ ջեզիտ, մի հայրենասէր դաւաճան, մի ըկերասէր մատնիչ, մի իմաստալի խօսող պոռոտախօս, մի անգործ գործիչ և մի համեստ պարծենկոտ։

Տակէն ինչ կելնէ։

— „Տիեզերական Միութիւն“... ընդ նախագահութեամբ... Այդ մէկի որոշումը, քեզ կը թողում, ընթերցող... Արդէն աղէկ գիտես, թէ այդ ներկայացուցչական մեծ պաշտօնը դինուաագիտութեան ամենաանհրաժեշտ մասն ու բաժինն է... Վերջապէս նախագահը պիտի ընտրուի միացողներու քուէից բացարձակ մեծամասնութեամբ և ատոնց ամենէն հռչակաւոր անունը պիտի օծուի այդ պաշտօնի օծեալ իւղով...

— 0 —

Ընցեալները յանկարծ լուրեր տարածուեցան մեր աննման կ. Պոլսոյ մէջ, թէ իբր Օրմանեանն անձնասպան է եղած։ Կրնաք երևակայել այն թունդը որ տիրեց Պոլսահայերու սրտերուն... Ամբողջ քաղաքն իրարանցման մէջ էր։ Պոլսոյ ամենէն մեծ ջոջերը և ամենէն նշանաւոր գրագէտները և ամենէն երևելի ազգայիները տխրադէմ, սրգաւոր և սրտագող կ՚ աճապարէին դէպի պատրիարքարան... Բայց քիչ մը ետքը այնտեղէն դուրս ելնելով երջանկութեան պայծառ ժպիտ մը կը տեսնուէր ամենուն դէմքերու վրայ... „Ո՛չ, ո՛չ, անձնասպան եղած չէ“ կը հանդարտեցուցնէին անոնք ամենու սրտերը։ Ճիշդ այդ խօսքերուն վրայ էր, որ գաւառացիներէն մին, որն առհասարակ խենթի հռչակ ստացած է մեր Պոլսոյ խելօքներէն, բարձրաձայն խնդաց ու պոռաց.

— Ինչպէս չէ եղած. անիկա շատոնց անձնասպան է եղած... բարոյապէս։

ԹՄԲՈՒԿ.

ԻՄ ՓՈՔՐԻԿ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՍ

Հէնց որ գրիչը կարողանում է ձեռքն առնել՝ հայն ինքն իրան անմիջապէս տաղանդ է դարձնում։ Եւ... և սկսում է իրան համար ճանապարհ բանալ, ամենից առաջ գրելով ճանապարհորդական նամականի կամ տպաւորութիւններ կամ յիշողութիւններ... և կամ բանաստեղծութիւններ։ Եւ մեր ամեն նշանաւոր գրուածքներն արդէն միմիայն դրանք են... Այդ հէնց նոյն իրանց հեղինակների կարծիքն է։ Եւ գրականութեան մէջ արդէն եթէ հէնց իրանց հեղինակների կարծիքը չը լինի հեղինակաւոր իրանց գրուածքների մասին, հապա որինը կարող է լինել։ Պարզ բան է, որ ոչ ոքի։ Որովհետև հեղինակն ամենքից աւելի ընդունակ է լուրջ կերպով վերաբերելու դէպի իր յիմարաբանութիւններն ու իմաստակութիւնները։ Այսպէս, մեզնից, պարզ մահկանացուներից, որ մէկը կարող է ճաշակ զգալ „Հայքի“ հանճարաբանութիւններում, եթէ ոչ միայն և միմիայն իր նշանաւոր խմբագիրը։ Եթէ հինգ օր և հինգ գիշեր մեր գանգը տռաքացնենք՝ բնաւ ոչինչ չենք հասկանալ նրանից. բայց նա ինքը մի ժամում, մի քանի ժամում կարողանում է անսանձ գրչով այնքան թխել ամեն տեսակի, ամեն գոյնի և ամեն հոտի բաներ, որ հօջա նասրադինի բոլոր առակները ես միանգամից ակամայ յիշում եմ ու ծիծաղից մեռնում...

Դառնանք մեր խօսքին։ Ճանապարհորդական գրուածքներն էլ այն առաւելութիւններն ունեն, որ կարող ես ոչ միայն տեսածդ ու գտածդ, այլ և չը տեսածդ ու չը լսածդ էլ լրել, գրել ինչպէս քէֆդ է տալիս. ով գիտէ ճիշդ է, թէ ոչ. ընթերցողն ամեն բան պէտք է ընդունէ, ինչպէս որ ինքն հեղինակն է ուզում... „Իտալական նամականիի“ և „Բերլինի յիշողութիւնների“ նշանաւոր հեղինակը նշանաւոր է հէնց նրանով որ գրել է, ինչ որ քէֆն է տուել, և եթէ նրա տասը բառից ինը հաւատալ չէ կարելի, իսկ տասներորդն էլ կասկածաւոր է, դա բնաւ չէ խանգարում այն բանին, որ հեղինակն ինքն իրան շատ գնահատէ և մեզ քայլ առ քայլ տանջէ իր մեծ անձնաւորութեան վերաբերեալ ամեն-մի մանր-մունր բաներով, թէ, օրինակ, երբ, որ ժամին այցելութիւն արաւ այս-ինչ մեծ անձնաւորութեան (միշտ մեծ՝ ի հարկէ), երբ գնաց քաղաքային պարտէզը, երբ՝ թատրօն, երբ ձաշեց, երբ ընթրեց, երբ խմեց, երբ խօսեց, և ինչ սքանչելի կերպով խօսեց, երբ լռեց և ինչքան խորհրդաւոր էր իր լռութիւնը, երբ հազաց, երբ խնդաց, երբ լացեց (եթէ չի էլ լացել, նկարագրութեան ամբողջութեան համար այդ էլ գրել անհրաժեշտ է), երբ գընաց սենեակ (անշուշտ քաղաքի ամենամեծ հիւրանոցում), երբ յօրանջեց և սկսաւ քունը տանել, մինչդեռ միևնոյն ժամանակ ախ էր քաշում հայրենիքի համար (ախար առանց այդ չի լինիլ, ինչպէս կարելի է), երբ հանուեցաւ, երբ խնչեց, երբ թնչեց, կոկորդը լուաց և վերջապէս երբ պառկեցաւ ու մտաւ ամենափափուկ անկողինը, փափուկ... չորս կողմից.... Վերջապէս այդ մեծ անձնաւորութիւնների ճանապարհորդականները կարդալիս՝ ընթերցողը դառնում է հեղինակի պոչը, որ չէ կարողանում զատուել նրանից և ստիպւած շարունակ հետևում է նրան ամեն տեղ, ամեն ծակ ու ծուկ... Այլապէս հեղինակը մեղադրում է ընթերցողին տգիտութեան մէջ գիւանագիտական աշխարհի մեծամեծ անցքերի ու անձնաւորութիւնների նկատմամբ, մեղադրում է, որ դրանք իմանալու համար՝ չը կարդալով նրա ճանապարհորդականը, չես եղել նրա պոչը...

Այսպէս, ճանապարհորդականներ գրելը շատ լաւ բան է... շատ ձեռնտու հեղինակի համար։ Եթէ առարկես հեղինակին, թէ, բարեկամ, Բիսմարկի գլուխը քաչալ է, նա ամենայն ամբարտաւանութեամբ կը պատասխանէ թէ, „Բիսմարկին տեսնողը ես եմ եղել, թէ դո՞... Բիսմարկի գլուխն ամբողջ ծածկւած է սպիտակ մաղերով...“ Եթէ քիչ էլ պնդեցիր քո ասածների վրայ, նա ամենայն լրբութեամբ քեզ կը մեղադրէ լրբութեան մէջ... և էշը ցեխիցը հանել այլ ևս չես կարողանալ...

Այսպէս, տեսնելով որ ճանապարհորդականներ գրելը շատ լաւ բան է, ես էլ մտադրւեցայ գրել իմ փոքրիկ ճանապարհորդութիւնը դէպի Հրատ մոլորակը, որպէսզի հռչակ ստանամ, մեծ մարդու տեղ անցնեմ... Եղբայր, ախար տարին տասնևերկու ամիս անյայտ, անծանօթ մէկը մնալ չի՛ լինիլ... Հիմա հայ աշխարհս մեծ է համարում միայն այն մարդկանց, որոնք իրանք իրանց մասին ամենքի առաջ ամենալիրը կերպով գովեստներ են կարդում և ուրիշներին վար զարնում... Այսպէս էլ զարմանք բա՞ն կը լինի... Ահա հէնց անցեալ օրը շուկայում ոտքիս տակ մի գիրք ընկաւ. ճակատին խոշոր տառերով գրւած էր „ԶԷՅԹՈՒՆ“... Ես վերցրի և կարդացի... և շարունակ վախից դողում էի։ Կարո՞ղ ես երևակայել, ընթերցող, իմ վիճակս. այդ գիրքը կարդալիս՝ ինձ շարունակ այնպէս էր թըւում, որ էլ սաղ աշխարհ կորել, խաւարել, ոչնչացել պրծել է, որ էլ իսան մարդ չը կայ, չորս կողմ ամայի է, անապատ և... և... միայն իմ առաջս էր կանգնած մի թզուկ մարդ, որ իր „ես“-ովը լցրել էր ամբողջ ԶԷՅԹՈՒՆը... Հէնց այդ մարդն էլ այն գրքի թխողն ինքն էր... Եւ այդ թխողից դուրս՝ էլ ոչ ոք չը կար աշխարհում և եթէ այդ „ես“-ն էլ չը լիներ, աշխարհս կը կործանուէր... յամենայն դէպս ԶԷՅԹՈՒՆը կը կործանուէր... Եւ ԶԷՅԹՈՒՆում ամեն բան այդ „ես“-ն էր... այնտեղ ուրիշ մարդ, ուրիշ իսան չը կար... Հերոս, քաջ, խելօք, դիւանագէտ, ապստամբապետ, ռազմագէտ, սպարապետ, հրամանատար, յաղթող, շինող, կեանք տուող, հոգի ներշնչող և այլն և այլն... ամեն բան հէնց նոյն ինքն էր, պատիկ գաճաճի այդ մեծ „ես“-ը, վանքերում մկների ծակերում թաքնւած այդ մեծ „ես“-ը, արժանի հոսոս աշակերտն իր հոսոս ուսուցչի, որ Կ. Պոլսի ինքնագովական ու իրարագովական, ստաբանական ու իմաստական, վախկոտութեան ու նախանձի մեծ, հռչակաւոր դպրոցի պետն է... վերջապէս, ինչպէս ասում է „պոլսեցի մեծ (միշտ մեծ) քննադատը“ — „այդ գիրքը և հեղինակը մի հատիկն է իր տեսակին մէջ։“ Եւ այդ բանում ես նրա հետ սիրով համաձայն եմ... որովհետև աշխարհս շատ թըշուառ կը լինէր, եթէ այդ մեծապատիւ թըխողի տեսակից մի քանի հատիկ լինէին... Ամեն բան ծուռ կերթար, ամեն բան ծուռ կը հասկացուէր, ծուռ կը գրուէր և աշխարհս կը հեղեղէր զզուելի ստախօսների գրական փսխունքներով, և ամեն-մի դասալիք, խաբեբայ, հացկատակ ու դաւաճան երևան կը հանէր մի մի հատիկ մեծ պարկ ամեն աղտեղութիւններով լի... պատմական ճշմարտութիւնների փոխարէն։ Երևակայում եմ, թէ որքա՞ն կը հոտէր աշխարհը...

Այսպէս, ես էլ որոշել եմ յիշողութիւններս, ճանապարհորդականս գրել և ես էլ դառնալ ազգի հերոս այս ազգի դարում և խօսքերիս շնորհով անցնել „մի հատիկների ու տեսակների շարքը։“

Կախ ասեմ թէ ինչպէս եղաւ, որ այդ հանճարեղ միտքը գլխովս անցաւ։

Մէկ օր սենեակումս մենակ նստած էի և ճիշդ այն տրամադրութեան մէջ ընկայ, ինչ որ մեր միշտ նշանաւոր ճանապարհորդական գրողները և պոլսեցի մեծահանճար բանաստեղծները։ Այսինքն-խորհրդաւոր, մեծամեծ մտքեր սկսան եռալ իմ խորհրդաւոր ճակատիս ետեւը (ուզում եմ ասել՝ գանգային արկղի մէջ), վսեմ զգացումները տիրացան իմ զգայուն սրտիս, հոգիս սկսաւ թռթռալ, ինչպէս թռչնակ, ինչպէս զեփիւռ, ինչպէս Կ. Պոլսի փոշին, ինչպէս Բոսֆորի գեղածիծաղ ալիքները, ինչպէս ոպտիկանի երևեցած ժամանակը, ինչպէս ռէվոլվերի ձայնը լսած միջոցին, ինչպէս... վերջապէս բեղմնաւոր էին մտքերս, հանճարս ըսկըսած էր իր մեծ գործը և մեծ մարդուն յատուկ իղձը վսեմաբար շրջապատել էր սրանչելի գլուխս, պատել շրջապատել նրան անմահ պսակով, յաւիտենական փառքով և աստուածային ներշնչումով։

Ընթերցողս կարծեմ հասկացաւ բաւական, թէ որքան տրամադրութիւնս նման էր պոլսեցի և պոլսակիրթ պարոն գրչակների ու գործիչների ու հռչակաւոր հոսոսների տրամադրութեան։ Ուրեմն էլ չեմ շարունակիլ տրամադրութեանս նկարագրութիւնը, թէև խոստովանում եմ, որ դրանով մեղանչած կը լինեմ վերոյիշածների սքանչելի ու ախորժելի սովորութեան դէմ, այն է՝ սեփական անձի մասին գրել տասը տողից առնւազն ինը տողը... Բայց ես դեռ նոր եմ սկսում պոլսական դրպրոցի դասերն առնել... սպասեցէք քիչ սովորեմ ու վարժւեմ, այն ժամանակ, սիրելի ընթերցողս, գլուխդ էլ կը պայթեցնեմ, հոգիդ էլ կը հանեմ և կը ստիպեմ քեզ իմ մասին կարդալ այնքան, որքա՞ն դու բնաւ չես ցանկանալ, այնքան, որ քիչն էլ շատ համարես։

Այսպէս, ես այդ մեծ տրամադրութեան մէջ էի, երբ գլխովս հանճարեղ միտք անցաւ ճանապարհորդել դէպի Հրատ, այցելել այդ մեր հարևանին և տեսնել, թէ այնտեղ նրանք ունեն հայերիս պէս նշանաւոր ճանապարհորդականներ ու յիշողութիւններու կեղծւած ստաբան պատմութիւններ գրող մի-մի հատիկներ ու տեսակներ, թէ ոչ... Ախ, որքան պէտք է մեղքանամ — մտածում էի ես խորհրդաւոր կերպով — եթէ Հրատի բնակիչներին զուրկ գտնեմ մեր այնպիսի հանճարներից... Էլ այն ժամանակ ինչո՞վ պէտք է նրանք պարծենան, ինչո՞վ զըւարճանան, ինչի՞ վրայ ծիծաղեն, որի՞ օյինաբազութիւններին ծափահարեն... Եթէ մեր հանճարների պէս այնտեղ չը կան — շարունակում էի մտածել նոյն կերպով — այն ժամանակ Հրատաբնակները երևի զարմանալի կերպով տըխրադէմ, խոժոռ, անժպիտ պէտք է լինեն, որ չեն վայելում, մեզ պէս, մասխարայի մասուութիւնները, ստախօսի մազգալու լրբութիւնը և

տգէտի կամ խաբեբայի կամ médiocrité-ի մեծ անունն ստանալը։

Ես ասացի, որ մտադրեցայ գնալ մինչև Հրատ... և գնացի... Այո՛, գնացի... անհաւատալի բան չը կայ. Եթէ „Նամականիներում“ և „Զէյթուններում“ ու պօլսական բանաստեղծութիւններում պատմածների գէթ կէսը հաւատալ կարելի է, ինչո՞ւ անհաւատալի պէտք է համարել իմ դէպի Հրատ արած ճանապարհորդութիւնս.., Ես չեմ կարծում — համեստաբար — որ իմ այդ գործս աւելի հանճարեղ լինի, քան միւսներինը...

Վերջապէս, ընթերցող, կուզես՝ հաւատա, կուզես՝ մի հաւատա — ես գնացի Հրատ... Թէ ինչ տեսայ այնտեղ՝ կը պատմեմ միւս անգամ...

ՀՍԿԱՅ — ԹԶՈՒԿ.

?

ՆՈՐԱՏԵՍԱԿ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Հագած մորթըն առիւծի,
Նա դուրս ելաւ, կանգնեց մէջտեղն փողոցի.
Այծն ու ուլը, կովն ու եզը, խոզն ու ձին
Սարսափեցան և երկիւղից վազեցին։
Կենդանին էր նորատեսակ,
Մորթը գլխին դարձած պըսակ։
Բայց երբ որ նա պինդ զըռաց՝
Կատուն, որ աչքն էր չըռած,
Մի ծիծաղով հեգնաբար
Քրքըջաց
Ու ասաց.
„Բա՜հ, այդ դո՞ւ ես առիւծ դարձել, էշ աղբա՛ր„։

Ո՞վ է այդ էշ-աղբարը։

* * *

Զարդարուած ճոխ փետուրներով՝
Մօտ էր գալիս կըտուցներով,
Կարծես լինէր [illegible],
Ստացած գոռոզ ու մեծ համբաւ։
Բայց երբ մօտիցըն անցաւ
Աքաղաղը, — բարկացաւ...
Աքաղաղը սուր կանչեց
Եւ հաւերին մօտ կոչեց.
Եւ հաւերը ծիծաղեցին. — "Բա՜հ, ինչ վարք.
Դո՞ւ ես եղել, ով կեղտոտ ոտք սիրամարգ"։

Ո՞վ է այդ սիրամարգ։

* * *

Եւ Թռչունը եկաւ, մըտաւ
Սոխակի բոյնը.
Ձագուկներին այնտեղ գըտաւ։
Ցոյց տուեց իր գոյնը —
Ամենքին էլ մէկիկ-մէկիկ
Ցած գըլորեց,
Լափեց նըրանց կերն ու խումը հատիկ-հատիկ,
Եւ ոլորեց
Ագին կամաց ու նստեց,
Կարծես բոյնըն ինք շինեց։
Զարմանքի բան այդտեղ չը կայ,
Երբ որ եղան ամենք վըկայ,
Որ այդ Թռչունն, որ Թըռում էր աճարկու,
Ուրիշը չէր, այլ թէ հոտած գող-կըկու։

Ո՞վ է այդ գող-կըկու։

ԳԻՑԵՄ.



ՋԷՋԻՒՏԻ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԵՒ ԿԱՄ
ՋԷՋԻՒՏԻ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԿՐԹԻՉ ԲԱՌԱՐԱՆ
Նորագոյն մեկնիչ մեթօդով.

(Նւէր նոր երրորդութեան՝ Ալֆարիական, Դր. Գաբրիէլ, Մինաս Չերազ եւ ընկ. :)

Ազատութիւն. — Կ. Պօլսում չաղ ապրելու միջոց։

Ազգ. — Շահագործութեան հանք։

Ազգասիրութիւն. — Ազգը շահագործելու զէնք։

„Ապտակ“. — Հալածող ուրուական կամ la bête noire։

Արդարութիւն. — Պարզասիրտների ցընորք ու երեւակայութիւն (ֆանտազիա)։

Գաղափար. — Անծանօթ ինչ որ բան։

Գովեստ. — Գովուած լինելու տենդ։

Գրիչ. — Աչքակապութեան ու իմաստակութեան գործիք։

Դիմակ. — Գլխաւոր մասը դէմքի։

Դիւանագիտութիւն — Ցխմար տեղով խելք ծախելու կեղծիք։

Զրպարտութիւն. — Հոգի և ոյժ։

Ժողովուրդ. — Ոչխարների հօտ։

Ինտրիգ. — Անձնական նպատակին հասնելու պայման։

Լեզու. — Մատնութեան զէնք և խաբեբայութեան օձ։

Լրագիր. — Ապացոյց տգիտութեան և աղբի շտեմարան։

Խաբեբայութիւն. — Շահի պահանջ։

Խարդախութիւն. — Ուրիշների ոտքի տակ գերեզման փորելու հնարագիտութիւն։

Խօսք. — Ամեն բան ի չարը գործ դնելու աստուածային պարգև։

Կեանք. — Ամեն տեսակ վայելքի աղբիւր դրամի միջոցով։

Կարծիք. — Մշտափոփոխ բազմագոյն ձեւանցներ։

Կեղծիք. — Յարաբերութիւններում ամենաանուղիղ ուղղութիւն։

Համոզում. — Օտարոտի ինչ-որ բան։

Հայրենասիրութիւն. — Անհրաժեշտ դիմակ։

Հայրենիք. — Դաւաճանութեան առարկայ։

„Հնչակ“. — Անվերջ մղձաւանջ ջէզւիտի համար։

Ճշմարտութիւն. — Վերջին պատիժ ջէզւիտի գլխին։

Մեծամոլութիւն. — Անմահութեան ժանտախտ։

Յեղափոխութիւն. — Շահագործութեան նորամօդա մեթօդ։

Շահ. — Ամենազօր Աստուած։

Շողոքորթութիւն. — Խաբեբայութեան կամ քծնութեան դիմակ։

Ուղերձ (կամ խնդրագիր). — Մեծերի մօտ ծառայ ընդունելու միջոց։

Պատգամաւոր. — Աշխարհս խաբող սըտախօս։

Սիրտ. — Սատանայի որջ։

Ստախօսութիւն. — Կեանքի հացն ու պանիրը։

Ցիլինդր (ղազան-փափախ). — Իշու վրան ձիու Թամբ։

Փառք. — Վատութեան գագաթնակէտ։

Այս Բառարանի ստուգաբանութիւնն ընթերցողը կարող է գտնել հետևեալ հանճարաբանութիւններում. — „Հայք“ Գաբրիէլի, „l'Arménie" Չերազի և Ալֆարիական հանգուցեալ չը ծնած մեռած Թերթում։

X.

ՈՒՐԻՇՆԵՐԻ ՄՏՔԵՐ

Կառավարութեան գործերը և ո՛չ սրանց դէմ եղած գրուածքները — ահա՛ անցած յեղափոխութիւնների պատճառը, ահա՛ հէնց դա էլ կառաջացնէ ապագայ յեղափոխութիւնները։

ԼՈՐԴ ԲԱՅՐԸՆ.

* * *

Կան տխմարութիւններ շատ լաւ զուգուած, ինչպէս կան նաև տխմարներ շատ լաւ հագնուած։

ՇԱՄՖՕՐ.

* * *

Երբ յայտնւում է աշխարհում մի հանճար, դուք նրան կը ճանաչէք այն նշանից, որ տըխմարները միանում են նրա դէմ։

ՍՈՒԻՖՏ.

Իմաստունն իր արածը չէ ասում, բայց չէ անում այնպիսի բան, որ կարելի չը լինէր ասել բացարձակ։

ՉԻՆԱԿԱՆ ԱՍԱՑՒԱԾ.

* * *

Ազատութիւնն առնում են և ո՛չ թէ ըստանում, — և նա, որ այն առաւ և յետոյ վերադարձրեց առանց կռուի, մի պարզ գող է և ո՛չ յաղթանակ տանող, և այդպիսին պէտք է կախել։

Լ. ԲԷՕՌՆԷ։

* * *

Ֆրանսիացի մեծ գրող Վօլտէրը երևան եկաւ Մեծ Յեղափոխութիւնից առաջ, ինչպէս կայծակը որոտից առաջ։

ՆՈՅՆ.

* * *

Ամենավտանգաւոր մարդը նա է, ով երկչոտ է, ամենից շատ պէտք է նրանից վախենալ։

ՆՈՅՆ.

* * *

Չըկայ մարդ, որ չը սիրէ ազատութիւնը, բայց արդարասէրը պահանջում է այն ամենքի համար, իսկ արդարատեացը — բացառապէս իրան համար։

ՆՈՅՆ.

* * *

Ապացուցուած է, որ սրիկայ մարդիկն աւելի են օգտւում հասարակութեան մէջ կեանքից, քան ազնւամիտները։

ՆՈՅՆ.

* * *

Շատ բաներից արդէն դադարել եմ զարմանալ, բայց որ երկու դիւանագէտներ կարողանում են իրարու երես նայել առանց ծիծաղի, դա մինչև այժմ ինձ ապշեցնում է։

ՆՈՅՆ.

ՔԱՂՈՒԱԾ »ԻԳՏԱՄ« ԹՈՒՐՔ ՊԱՇՏ. ԹԵՐԹԻՑ.

„Մեր քաջամարտիկ զինուորների ձեռք բերած աջողութիւնների շնորհով՝ զօրեղացաւ մեր ֆինանսը և զինուորականութիւնը. ոգևորեց մահմեդականութիւնը և ուժեղացաւ մեր ազգային զգացումը, մեր վարկը օտար երկիրներում բարձրացաւ։ Եւրոպան հիմա դողում է Թիւրքիայից, վեց Պետութիւնները երկիւղով են վերաբերում, դէպի մեր չնաշխարհիկ խալիֆան։ Մեր երկրի ոյժը այժմ սարսափ է ազդում բոլոր աշխարհին. սրանից յետոյ ոչ մի տէրութիւն չի համարձակւիլ մեզ հետ պատերազմի մտնել, որովհետև Օսմ. զօրքերի Յունաստանին տուած ազգային մի գործնական խըրատ էր միւս պետութիւններին... Մեր վարկի բարձրութիւնը կարող էք հասկանալ նըրանից, որ Եւրոպացի, մինչև անգամ Ամերիկացի դրամատէրերը փոխառութիւն են առաջարկում երկաթուղիի, նաւերի և հանքերի հաստատութիւնների համար։ Եւ արդէն սուլթանի շնորհիւ ամբողջ կայսրութեան մէջ գծերը ձգուած՝ շոգեկառքերը գործում են. նմանապէս հանքերը առատ ոսկի են արտադրում... կարող ենք իսկ պարծանքով ասել որ Եւրոպան Թիւրքիայի հետ բաղդատելով շատ ետ մնացած է։ Բարենորոգումներ և ազատութեան լայն պայմաններ մեր երկրում աւելի են փայլում քան Եւրոպայում և Ամերիկայում... Ա՜խ, ինչ ճակատամարտ էր Մուհամմէդից օրհնուած“։

Այսպիսի խելօք դատողութիւններ կարդալուց յետոյ մարդ ինչպէս ծիծաղից չը տռաքէ։

ԱԶԴ.

„Ըպտակի“ ներկայ համարի նկարը հանւած է առանձին Թղթի վրայ։

ԼՕՆԴՕՆ. „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ.